ՊԵԿ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ 2025Թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն հաշվետու տարվա ընթացքում, հետամուտ լինելով ՀՀ կառավարության կողմից որդեգրած հարկային և մաքսային ոլորտների շարունակական բարեփոխումների իրականացման գերակայություններին, ապահովել է ձեռնարկված ուղղություններով զարգացման նշանակալի դրական արդյունքներ և ցուցանիշներ:

2025 թվականին հաստատվել են հարկային վարչարարության բարեփոխումների և մաքսային ծառայության առաջիկա տարիների զարգացման ռազմավարական ծրագրերը, որտեղ սահմանվել են նաև ինստիտուցիոնալ զարգացման ուղենիշերը՝

ՊԵԿ առաքելությունը՝

ապահովել արդար և թափանցիկ հարկային և մաքսային միջավայր, խթանել կամավոր կարգապահությունը և ծառայել քաղաքացիներին ու բիզնեսին՝ հանուն Հայաստանի առաջանցիկ զարգացման,

ՊԵԿ տեսլականը՝

ՊԵԿ-ը դինամիկ զարգացող և առաջատար կառույց է, որը հայտնի է տեխնոլոգիական համարձակ նորարարությամբ և մարդակենտրոն մոտեցմամբ:

Կարևորելով ՀՀ տնտեսական զարգացման ապահովման ուղղությամբ ՀՀ ՊԵԿ դերակատարումը՝ 2025 թվականի ընթացքում ՊԵԿ կողմից իրականացվող բարեփոխումներն առավելապես ուղղված են եղել գործարար միջավայրի բարելավման նպատակով հարկային վարչարարության և մաքսային ընթացակարգերի պարզեցմանը, թվային և վերլուծական գործիքների դերի էական բարձրացմանը, ստվերի դեմ թիրախային պայքարին, կամավոր կարգապահության բարձրացմանն ուղղված արդյունավետ, հետևողական վարչարարության իրականացմանը և օրինապահ հարկ վճարողների համար տնտեսական խթանների ընդլայնմանը: Այս ամենը ամուր հիմքեր են ստեղծել հարկային եկամուտների երկարաժամկետ աճի և կամավոր հարկ վճարելու մշակույթի արմատավորման համար՝ միաժամանակ ստեղծելով ավելի արդար և մրցակցային տնտեսական դաշտ:

ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

2025թ. արդյունքներով պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 2 տրլն 725.2 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա ցուցանիշից ավել է շուրջ 334.3 մլրդ դրամով կամ 14%-ով, 2023 թվականից ավել է 451.4 մլրդ դրամով կամ 19.9%-ով, 2022թ.-ից ավել է 762.8 մլրդ դրամով կամ 38.9%-ով, 2021թ.-ից ավել է 1 տրլն 115.7 մլրդ դրամով կամ 69.3%-ով, 2020թ.-ից ավել է 1 տրլն 326.7 մլրդ դրամով կամ 94.9%-ով, 2019թ.-ից ավել է 1 տրլն 253 մլրդ դրամով կամ 85.1%-ով, 2018թ.-ից ավել է 1 տրլն 462.4 մլրդ դրամ կամ 115.8%-ով և 2017թ.-ից ավել է 1 տրլն 564.8 մլրդ դրամով կամ 134.9%-ով:

2014-2018թթ. ժամանակահատվածի հարկային եկամուտների հնգամյա աճի հանրագումարը կազմել է շուրջ 261,9 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2021-2025 թթ. ժամանակահատվածի եկամուտների հնգամյա աճի հանրագումարը կազմել է շուրջ 1.326,7 մլրդ ՀՀ դրամ: Նշված հնգամյա ժամանակահատվածների աճերի տարբերությունը կազմում է շուրջ 1.064,8 մլրդ ՀՀ դրամ կամ 406,6%:

Ընդհանուր հարկային եկամուտների մեջ հարկային մարմնի կողմից հավաքագրված մուտքերի կշիռը կազմել է 81.5 տոկոս, ինչը 0.4 տոկոսային կետով ավելին է, քան նախորդ տարի, իսկ մաքսային մարմնի կողմից հավաքագրված մուտքերի կշիռը կազմել է 18.5 տոկոս, ինչն արդեն 0.4 տոկոսային կետով պակաս է, քան նախորդ տարի:

Ընդ որում, նախորդ տարվա նկատմամբ էական աճ է արձանագրվել հետևյալ հարկատեսակներով, մասնավորապես՝

- ԱԱՀ-ի աճը՝ շուրջ 158.5 մլրդ դրամ կամ 21%,
- Ակցիզային հարկի աճը՝ շուրջ 17.8 մլրդ դրամ 12.1%,
- Շահութահարկի աճը՝ շուրջ 65.8 մլրդ դրամ կամ 19.6%,
- Եկամտային հարկի աճը՝ շուրջ 76.8 մլրդ դրամ կամ 11.8%,
- Շրջանառության հարկի աճը՝ շուրջ 18.3 մլրդ դրամ կամ 30.1%,

Բացառություն է կազմում ռոյալթին, որի գծով արձանագրվել է նվազում 33.6 մլրդ դրամով կամ 43%-ով: Ընդ որում, հիմնականում նվազումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով: Մասնավորապես, 2023թ.-ի հունվարի 1-ից ռոյալթիի համակարգի վերանայմամբ պայմանավորված 2024թ.-ին բյուջե մուտքագրվել էին լրացուցիչ հարկեր, որոնց համարժեք 2025թ.-ին հարկեր չեն մուտքագրվել: Միաժամանակ, համաձայն ՀՀ ՎԿ տվյալների 2024թ.-ին հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտում ծավալները նվազել են 8.6%-ով, որով պայմանավորված նվազել են նաև տարվա ընթացքում վճարվելիք կանխավճարների գումարները:

ՀՆԱ-ի մեջ հարկային մարմնի կողմից հավաքագրված մուտքերի կշիռը կազմել է 19.6 տոկոս, ինչը 0.6 տոկոսային կետով ավելին է, քան նախորդ տարի, իսկ մաքսային մարմնի կողմից հավաքագրված մուտքերի կշիռը կազմել է 4.4 տոկոս, ինչը 0.02 տոկոսային կետով պակաս է, քան նախորդ տարի:

Հարկեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 24.08 տոկոս, ինչը նախորդ տարվա ցուցանիշից ավել է 0.62 տոկոսային կետով, որը մեծապես պայմանավորված է վարչարարական ջանքի գործադրման և օրենսդրական փոփոխություններով պայմանավորված լրացուցիչ մուտքերով:

Հարկային վարչարարության արդյունավետության գործակիցը (հարկային մարմնի ընթացիկ ծախսերի և հավքագրված հարկային եկամուտների (ներառյալ եկամտային հարկի վերադարձը) հարաբերությունն արտահայտած տոկոսով) կազմել է 1.02 տոկոս, ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.22 տոկոսային կետով: Վերջինս նշանակում է, որ պայմանական 100 դրամ հարկ հավքագրելու համար կատարվել է 1.02 դրամի ծախս՝ 0.22 դրամով ավելի պակաս, քան նախորդ տարում:

2025թ.-ի ընթացքում հարկ վճարողներին վերադարձվել է շուրջ 409.2 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշից ավել է շուրջ 16.6 մլրդ դրամ կամ 4.2%: Աճը հիմնականում պայմանավորված է հիփոթեքի տոկոսագումարների դիմաց վերադարձված և սոցիալական ծախսերի մասով փոխհատուցված գումարների աճով: Մասնավորապես՝

• հիփոթեքային վարկի տոկոսների գծով վերադարձվել է շուրջ 95,6 մլրդ դրամ, ինչը ավել է նախորդ տարվա նույն ցուցանիշից 27 մլրդ դրամ կամ 39.4%,

սոցիալական ծախսերի մասով (2023-2024թթ. համար ներկայացված հաշվարկներով) փոխհատուցվել է 5,8 մլրդ դրամ, ինչը ավել է 5.4 մլրդ դրամով կամ 1604.6% 2024թ.-ի ընթացքում փոխհատուցված գումարից, ընդ որում վերադարձված սոցիալական ծախսի գումարները հաշվառված չէ պետական բյուջեի 2 տրլն 725.2 մլրդ դրամ եկամուտներում:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ռազմավարական եվ վարչարարության բարելավման ծրագրեր

ՊԵԿ ռազմավարական ծրագրերով սահմանված նպատակներն են՝

Հարկային մարմնի մասով.

ա) հարկային կարգապահության ամրապնդմանն ուղղված հարկային օրենսդրության կատարելագործում,

բ) կարիքների գնահատման հիման վրա մատուցվող ծառայությունների ընդլայնում,

գ) հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգերի կատարելագործում,

դ) հարկային կարգապահության ռիսկերի կառավարման բարելավմամբ կարգապահության բարձրացում և ստվերի կրճատում,

ե) մարդկային ռեսուրսների և ներքին կառավարման համակարգերի կատարելագործում:

Մաքսային մարմնի մասով.

ա) անվտանգ և ապահով առևտուր՝ բնակչության և սահմանների անվտանգություն, հսկողական ենթակառուցվածքների արդիականացում, միջազգային ստանդարտներին և պարտավորություններին համապատասխանություն, հանրության մոտ վստահության ամրապնդում,

բ) հարմարավետ՝ առևտրի դյուրինացում ու մրցունակություն, բարենպաստ լոգիստիկ հանգույց, ընդլայնված ծառայությունների շրջանակ, առավելություններ օրինապահ ԱՏԳ մասնակիցների համար,

գ) նորարար՝ առաջադեմ էլեկտրոնային կառավարման համակարգեր, արհեստական բանականության և մեքենայական ուսուցման գործիքակազմի ներդրում և ընդլայնում,

դ) թիմ՝ կադրային վարչարարության գործընթացների բարելավում, մաքսային մարմնի համալրման ու պահպանման, մասնագիտական կարողությունների

շարունակական ընդլայնման, կատարողականի կառավարման, վարձատրության և սոցիալական երաշխիքների արդիականացված համակարգերի ներդրում:

2025 թվականին շարունակվել են ՊԵԿ գործընթացներում կարգապահության ռիսկերի կառավարման համակարգի ամբողջական ինտեգրմանն ու արդյունավետ կիրառմանն ուղղված աշխատանքները՝ հիմնված միջազգային չափանիշների վրա: Այդ համակարգի նպատակն է հարկ վճարողների վարքագծային ռիսկերի գնահատման հիման վրա ընտրել համապատասխան թիրախային գործիքների (աջակցումից հսկողություն) և դրանց կիրառմամբ ապահովել կամավոր կարգապահության բարձր մակարդակ՝ միաժամանակ բարձրացնելով վարչարարության ծախսարդյունավետությանը:

Հարկ է նշել նաև, որ «հարկային մարմնում կարգապահության ռիսկերի կառավարման մեխանիզմների ինտեգրումը» հանդիսանում է Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքի (TADAT) բաղադրիչ: 2025 թվականին ՊԵԿ-ում այդ գործիքով իրականացված գնահատմամբ նշված բաղադրիչն, ընդհանուր առմամբ, դրական է գնահատվել: Այնուամենայնիվ, այս ուղղությամբ շարունակական զարգացումն ու միջազգային չափանիշներին մշտապես համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ 2025 թվականին.

ա) մշակվել ու իրականացվել է կահույքի ոլորտի հարկային կարգապահության բարելավման ծրագիրը (այն ներկայումս ընթացքում է), շարունակվել են 2024թ. հաստատված խոշոր հարկ վճարողների հարկային կարգապահության բարելավման ծրագրով սահմանված միջոցառումները,

բ) հաստատվել է Կարգապահության բարելավման ծրագրերի մշակման նպատակով հարկ վճարողներին ըստ ռիսկայնության դասակարգման ու ծրագրերի արդյունքների գնահատման ուղեցույցը, որի նպատակն է ապահովել ՀՀ ՊԵԿ-ում կարգապահության ռիսկերի կառավարման գործընթացների համակարգված ու միասնական մոտեցումներով իրականացումը,

գ) հաստատվել է հարկային վարչարարության բարեփոխումների ռազմավարական ծրագիրը, որով սահմանվել են կարգապահության ռիսկերի կառավարման գործընթացների զարգացմանն ուղղված ռազմավարական միջոցառումներ,

դ) իրականացվել են կարգապահության ռիսկերի կառավարման կարողությունների ընդլայնմանն ու վերահսկողության գործընթացների արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:

2025 թվականի ընթացքում ՊԵԿ կողմից իրականացվել և մեկնարկել են նաև մի շարք այլ առանցքային բարեփոխումներ, որոնցից առավել հատկանշական են.

- էլեկտրոնային համակարգերի և ենթակառուցվածքների համապարփակ ախտորոշումը և արդիականացումը,
- հարկային ռիսկերի կառավարման համակարգերի կատարելագործմամբ և թվային հետախուզության գործիքների դերի նշանակալի բարձրացմամբ ստվերի կրճատումը,

- բոլոր ուղղություններով վերլուծական նոր գործիքների մշակումը, արհեստական բանականության նոր գործիքների ներդրումը, հսկիչ նշանների համակարգի կատարելագործումը,
- նպաստների վճարման, հարկային ռեզիդենտության տեղեկանքի տրամադրման, աշխատանքային պայմանագրերի կնքման և առողջության համընդհանուր ապահովագրության վճարների վճարման նոր թվային պլատֆորմների մշակումը,
- մաքսային ռիսկերի համակարգի համապարփակ կատարելագործմամբ մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացումը և գործընթացների ժամանակատարության էական նվազումը,
- «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի կատարելագործումը, EXIM տեղեկատվական համակարգի մշակումը, մաքսային ռիսկերի համակարգում արհեստական բանականության գործիքների, մաքսային միասնական հաշվի ներդրման և ցամաքային անցման կետերի նոր միասնական թվային պլատֆորմի մշակման մեկնարկը,
- հարկ վճարողների հետ մարդակենտրոն հաղորդակցման գործիքների և հարթակների ընդլայնումը,
- առաջին անգամ շուրջ 4 տասնյակ երկրների հետ ֆինանսական հաշիվների փոխանակումը,
- միջազգային համագործակցության ընդլայնումը և ՊԵԿ-ի միջազգային դիրքերի ամրապնդումը:

Հաշվի առնելով, որ հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքի (Tax Administration Diagnostic Assessment Tool-TADAT) կիրառմամբ հարկային վարչարարության արդյունավետության պաշտոնական գնահատում իրականացվել էր 2016 թվականին՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից նախաձեռնվել էր նոր գնահատում, որը և իրականացվել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) փորձագետների կողմից 2025թ. մայիսի 12-ից 27-ն ընկած ժամանակահատվածում:

Գնահատման արդյունքներով փորձագիտական խումբը ներկայացրել է ամփոփ զեկույցը, համաձայն որի, վերջին տարիներին Հայաստանում հարկային վարչարարության բարելավման ուղղությամբ իրականացված աշխատանքները, ընդանուր առմամբ, բարձր են գնահատվել՝ նշելով, որ 2016 թվականին իրականացված գնահատման համեմատ այս տարի իրականացված գնահատման արդյունքերը վկայում են հարկային մարմնի կողմից արձանագրած ակնհայտ առաջընթացի մասին, գերակշիռ ուղղություններով գնահատականները բարելավվել են, սակայն դեռ կան անելիքներ, մասնավորապես՝ 2016թ-ին A-B գնահատական ստացվել էր 30 ցուցանիշից 12-ի համար կամ 40%, ապա 2025թ-ի համար՝ 32-ից 20-ի համար կամ 62.5%-ը: Համապատասխանաբար, կրճատվել է նաև C-D գնահատականների քանակը. 2016թ-ին 30 ցուցանիշից 18-ի դեպքում կամ 60%, իսկ 2025թ-ին՝ 32-ից 12-ի դեպքում կամ 37.5%-ը:

Հարկ է նշել, որ գնահատման արդյունքները ներառվել են ՊԵԿ-ի ռազմավարական ծրագրերում և կարողությունների զարգացման գործընթացում: Մասնավորապես՝ ՊԵԿ կողմից 2025 թվականին հաստատվել է հարկային վարչարարության բարեփոխումների

ռազմավարական ծրագիրը, որտեղ ներառվել են առավել համակարգային լուծումներ պահանջող միջոցառումները: Միաժամանակ, մշակվել և հաստատվել է ՀՀ ՊԵԿ նախագահի առանձին հրաման, որտեղ ներառվել են հարկային վարչարարության բարեփոխումների ռազմավարության մեջ չարտացոլված և TADAT գնահատմամբ վերհանված խնդիրների բարեփոխմանն ուղղված ընթացիկ միջոցառումները:

Օրենսդրական բարեփոխումներ

Ընդունվել են վարչարարության բարելավման վերաբերյալ մի շարք օրենսդրական փոփոխություններ՝

- Նույնականացման միջոցներով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկի ընդլայնում, այդ ապրանքների հետագծելիության ապահովման, դրոշմավորման համակարգի կատարելագործման և հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով նոր կարգավորումների սահմանում:
- Նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվություն հարկային մարմնի միասնական շտեմարան չփոխանցելու կամ փաստացի փոխանցման ենթակա տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն փոխանցելու համար պատասխանատվության սահմանում:
- ՀՀ ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքների պարզեցված ընթացակարգով՝ էլեկտրոնային եղանակով տրամադրման գործընթացի սահմանում:
- Հայտարարագրման համակարգի պարզեցման նպատակով եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) որոշ նվազեցվող (չհարկվող) եկամուտների պարտադիր լրացման առումով նվազագույն շեմի սահմանում, ինչպես նաև հարկային մարմնի տեղեկատվական բազայում որոշ եկամուտների վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ ինքնաշխատ լրացման դրույթների սահմանում:
- Հարկային օրենսդրությամբ կրիպտոակտիվների հարկման առանձնահատկությունների սահմանում:
- Միասնական հաշվի համակարգի ներդրման նպատակով համապատասխան մաքսային վճարների գծով պարտավորությունների հաշվարկմանը և գանձմանն առնչվող կարգավորումների վերանայում:

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարկային վարչարարություն

- Հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունների՝ ամբողջ ծավալով և ժամանակին հայտարարագրման շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքում՝ հաշվարկային փաստաթղթերով (այդ թվում՝ ՀԴՄ կտրոններով) հարկ վճարողների կողմից հայտարարագրվել է ավելի քան 16.0 տրլն ՀՀ դրամ շրջանառություն՝ 2024 թվականի 13.9 տրլն ՀՀ դրամի համեմատ: Այսինքն՝ հարկ

վճարողները 2024թ.-ի համեմատ հայտարարագրել են 2.1 տրլն դրամով կամ 15.2%-ով ավել իրացում:

• Նշված տվյալներում ներառված չեն 2024թ.-ի սեպտեմբեր ամսից գործող տաքսի ծառայությունների մասով հայտարարագրված գործարքները, որոնք 2025թ.-ին կազմել են 105.5 մլն գործարք՝ 121.7 մլրդ դրամ արժեքով:

• 2025 թվականի տարեվերջի դրությամբ 0-ից բարձր հարկման բազա ունեցող աշխատատեղերի թվաքանակը կազմել է շուրջ 822.700 մարդ՝ 2024 թվականի շուրջ 778.100 համեմատ աճելով շուրջ 44.600-ով կամ 5,7%-ով, իսկ 2017 թվականի շուրջ 534. 200-ի համեմատ՝ 288 500-ով կամ 54.0%-ով:

• 2025թ.-ի արդյունքներով մեկ աշխատատեղին բաժին ընկնող եկամուտը կազմել է 401367 ՀՀ դրամ, ինչը 2024 թվականի համադրելի ժամանակահատվածի նույն ցուցանիշից ավելի է 22 192 ՀՀ դրամով կամ 5,9%-ով, իսկ 2017 թվականի ցուցանիշից 186 387 ՀՀ դրամով կամ 86,7%-ով:

• Հարկային մարմնի կողմից հսկողական աշխատանքների շրջանակներում 2025 թվականին իրականացված 876 համալիր հարկային ստուգումների արդյունքում արձանագրվել է շուրջ 40 մլրդ ՀՀ դրամ (այդ թվում՝ ներկայացված ճշտված հաշվարկներով առաջացած լրացուցիչ հարկ) նախորդ տարվա ընթացքում իրականացված 1 104 ստուգմամբ արձանագրված 62 մլրդ ՀՀ դրամի (այդ թվում՝ ներկայացված ճշտված հաշվարկներով առաջացած լրացուցիչ հարկ) դիմաց:

• Վերլուծությունների, կամերալ և թեմատիկ ուսումնասիրությունների արդյունքում 2025 թվականի ընթացքում պետական բյուջե հաշվեգրվել են 74,8 մլրդ ՀՀ դրամ լրացուցիչ հարկեր, ինչը գերազանցում է նախորդ տարվա նույն ամիսների ցուցանիշը 7,4 մլրդ ՀՀ դրամով կամ 11,0%-ով:

• 2025 թվականի հունվարի 1-ից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջացած և Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային չհամարվելու դեպքում փոխհատուցվող գումարը մուտքագրվում է հարկ վճարողի միասնական հաշվին՝ առանց ուսումնասիրության և ավտոմատ եղանակով: 2025 թվականի արդյունքներով 1 847 դեպքով հարկ վճարողների միասնական հաշվին փոխանցվել է 16,8 մլրդ ՀՀ դրամ:

• 2025 թվականի ընթացքում ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման շրջանակներում ներկայացվել է 182 հազար հայտարարագիր, ևս 692 հազար հայտարարագիր ձևավորվել է ՀՀ ՊԵԿ կողմից: Ներկայացված հայտարարագրերով վճարման ենթակա հարկը կազմել է 8,6 մլրդ ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշից ավելի է 4 մլրդ ՀՀ դրամով կամ 89,2%-ով:

• ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է 2025 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների աջակցության ծրագիրը, որի շրջանակներում 134 տնտեսավարողի կողմից ներկայացվել են դիմումներ, որոնցից պայմաններին

բավարարել են 92-ը: Ընդհանուր աջակցության ծրագրի շրջանակներում վերադարձվել է 49,7 մլն ՀՀ դրամ:

• Օրինապահ հարկ վճարողի հավաստագիր է տրամադրվել 57 տնտեսավարող սուբյեկտի (որից 1-ը՝ LSO ռեեստրում գրանցվելու համար):

Մաքսային վարչարարություն

• Հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչությունը 2024թ ընթացքում իրականացրել է թվով 93 մաքսային ստուգում, ինչի արդյունքում առաջադրվել է 2,1 մլրդ ՀՀ դրամ լրացուցիչ պարտավորություն, իսկ 2025թ. ընթացքում թվով 82 մաքսային ստուգմամբ 1,6 մլրդ ՀՀ դրամ (ներառյալ անբողոքարկելի չդարձած ակտերը) լրացուցիչ պարտավորություն:

• 2025 թվականին մաքսային մարմինների կողմից իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել է հետբացթողումային հսկողության արդյունավետության աճ՝ 21,3%-ով:

• 2025 թվականին հետբացթողումային հսկողության շրջանակում ապահովվել է 1,4 մլրդ ՀՀ դրամ (ներառյալ անբողոքարկելի չդարձած ակտերը), 2024 թվականին նույն ցուցանիշը կազմել է 1,1 մլրդ ՀՀ դրամ:

• Մաքսային իրավախախտումների մասով խոշոր բացահայտումներն են՝

Շուրջ 250 տրանսպորտային միջոցների ՀՀ ապօրինի տեղափոխման դեպքերի բացահայտում՝ 1,3 մլրդ ՀՀ դրամ պետությանը հասցված վնաս:

38 դեպքով կեղծ վկայականների հիման վրա մաքսային վճարների արտոնությունների ստացման դեպքերի բացահայտում (մշտական բնակության քողի ներքո)՝ 228 մլն ՀՀ դրամ պետությանը հասցված վնաս:

ՌԴ կեղծված համարանիշներով մեքենաների ներմուծման բացահայտում՝ 72 մլն ՀՀ դրամ պետությանը հասցված վնաս:

Կեղծված լիցենզիայի հիման վրա 7 551 տոննա ցեմենտի ներմուծման բացահայտում՝ 60 մլն ՀՀ դրամ պետությանը հասցված վնաս:

• 2025 թվականի հունիսի 1-ից ապրանքների արտահանման գործընթացը կազմակերպվել է 24/7 ռեժիմով: Մինչ այս ոչ աշխատանքային օրերին և ժամերին արտահանման ձևակերպումները կարող էին իրականացվել միայն պետական սահմանի անցման կետերում:

• 2025 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ապրանքների զննման դեպքերի («կարմիր ուղի») թվի տեսակարար կշիռը կազմել է 4,8%, որը 2024 թվականի համեմատությամբ նվազել է 1%-ային կետով, իսկ 2017 թվականի համեմատությամբ նվազել է շուրջ 5 անգամ (2017 թվականին զննման դեպքերի թվի տեսակարար կշիռը կազմել 23%): Միաժամանակ, «կանաչ ուղի» միջերեսային արտացոլմամբ ապրանքների հայտարարագրերի բացթողումը կազմել է շուրջ 73%՝ 2024 թվականի համեմատ 16,6 տոկոսային կետով ավել:

• 2025 թվականի հոկտեմբերի 1-ից բեռնափոխադրող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց անվամբ ՀՀ ներմուծված անձնական օգտագործման ապրանքների մաքսային ձևակերպման ամբողջ գործընթացն իրականացվում է մեկ վայրում՝ այն ժամանակավոր պահպանման պահեստի սպասարկման սրահում, որտեղ փաստացի գտնվում են տվյալ ապրանքները:

• 2025 թվականին նախնական մաքսային հայտարարագրման ինստիտուտից օգտվել են 377 կազմակերպություններ՝ 2024 թվականի համեմատ գրանցելով 49% աճ, ներկայացվել են 22 459 նախնական մաքսային հայտարարագրեր, որը գերազանցում է 2024 թվականի նույն ցուցանիշը 21,2%-ով, ներմուծված ապրանքների քանակը 2025 թվականի ընթացքում կազմել է 1 317 916 տոննա, որը 2024 թվականի ցուցանիշը գերազանցել է 33,49%-ով:

• «Թույլատվական փաստաթղթեր» (sw.gov.am) ենթահամակարգի միջոցով հայտատուների կողմից երկակի և (կամ) ռազմական նշանակության ապրանքների վերաբերյալ եզրակացություն ստանալու համար ներկայացված և ուսումնասիրված հայտերի ընդհանուր քանակը 2025 թվականի ընթացքում կազմել է 14. 865 (2024 թվականի համեմատ աճել է շուրջ 67,15%-ով): Ներկայացված հայտերի հիման վրա ուսումնասիրվել է 49. 891 ապրանքատեսակ:

• Մաքսային մարմնի կողմից հայտերի ուսումնասիրմանն ուղղված աշխատանքների արդյունքում տնտեսավարողները տնտեսել են ժամանակ (յուրաքանչյուր հայտի մասով՝ շուրջ 2-4 աշխատանքային օր) և ֆինանսական միջոցներ՝ շուրջ 194,6 մլն ՀՀ դրամ (2024 թվականի ցուցանիշը գերազանցել է շուրջ 57,8%-ով), որից 128,7 մլն ՀՀ դրամ՝ ռազմական նշանակության ապրանքների և 65,8 մլն ՀՀ դրամ՝ երկակի նշանակության ապրանքների մասով ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում:

• Սահմանային անցակետերի արդիականացման շրջանակներում՝

Ավարտվել է ՀՀ պետական սահմանի «Բագրատաշենի» ցամաքային անցման կետի ենթակառուցվածքների վերակառուցման աշխատանքների 1-ին փուլը:

Ռենտգեն պատկերների կենտրոնացված վերլուծությունների իրականացման նպատակով ԱՄՆ Արտահանման վերահսկման և սահմանների անվտանգության (EXBS) ծրագրի շրջանակում մեկնարկել են ժամանակակից մոնիթորինգային կենտրոնի ստեղծման աշխատանքները:

• ՀՀ ՊԵԿ համակարգում ռադիացիոն հսկողության արդյունավետ իրականացման նպատակով՝ ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի կողմից նվիրաբերվել է 7 ռադիոմետր-սպեկտրոմետր, ինչպես նաև նվիրաբերվել է 5 CT-40 մակնիշի մաքսանենգության դետեկտոր ճամպրուկ:

• «Բագրատաշեն» սահմանային անցման կետում տեղադրվել է բեռնատարների էլեկտրոնային ստացիոնար 2 կշեռք:

• Շարունակվել են Հայաստան-Վրաստան սահմանին համատեղ օգտագործման ցամաքային սահմանային անցման կետի ներդրմանն ուղղված աշխատանքները, ինչպես

նաև հայ-իրանական սահմանին Պարզեցված կամ Կանաչ մաքսային միջանցքի ներդրման աշխատանքները:

• Մաքսային սպասարկման ոլորտում արձանագրվել են աշխատանքի արդյունավետության բարձրացման հետևյալ ցուցանիշներ.

օրական սպասարկվող բեռնատարների թվի աճը կազմել է 5%,

ներմուծման ձևակերպումների գործընթացի տևողությունը միջինում արագացվել է շուրջ 10%-ով,

մաքսային հսկողության ընթացքում զննման դեպքերը 2025 թվականի ընթացքում նախորդ տարվա 8% ցուցանիշից հասել են 4,9%-ի:

Վարչական իրավախախտումներ

• Հարկային և մաքսային իրավախախտումների դեմ պայքարի շրջանակներում՝

561 սնանկ ճանաչելու պահանջի մասին և 630 պահանջը հաստատելու մասին դիմումներով վերականգնված գումարը կազմում է 7,3 մլրդ ՀՀ դրամ,

վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով՝ վարչական տույժ նշանակելու մասին 42 332 որոշումներով փաստացի գանձվել է 697,2 մլն ՀՀ դրամ:

• Կայացվել է հարկ վճարողների չկատարած հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ 122. 600 որոշում՝ ընդհանուր 143,2 մլրդ ՀՀ դրամի չափով, ՀԿԱԾ հարկադիր կատարման է ներկայացվել 93. 447 չկատարած հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ կայացված, անբողոքարկելի դարձած որոշումներ/ստուգման ակտեր՝ ընդհանուր 51,6 մլրդ ՀՀ դրամ մնացորդի չափով, իրականացված աշխատանքների արդյունքում՝ պետական բյուջե է վերականգնվել 109,6 մլրդ ՀՀ դրամ:

• ՀՀ ՊԵԿ ՀՕՀ վարչության արձանագրությունների հիման վրա կայացվել են 717 որոշումներ, նշանակված տուգանքի գումար՝ 1,9 մլրդ ՀՀ դրամ, ՀՀ Հարկային օրենսգրքի 422 և 423 հոդվածներով կայացվել է 294 որոշում՝ առաջադրված գումարը՝ 69,9 մլն ՀՀ դրամ, ՀՀ Հարկային օրենսգրքի 402.1 և 402.2 հոդվածներով կայացվել է 60 որոշում, առաջադրված գումարը՝ 256,3 մլն ՀՀ դրամ, ներկայացված աշխատանքների արդյունքում պետական բյուջե է վերականգնվել 452,7 մլն ՀՀ դրամ:

• ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված հայցադիմումներով առկա է 6 բավարարված վճիռ 400 հազար ՀՀ դրամ հայցագնով և 1 հայց մերժվել է: ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացվել է 2 290 հայցադիմում՝ 28,7 մլրդ ՀՀ դրամ հայցագնով, որից բավարարվել է 181 հայց՝ 1,3 մլրդ ՀՀ դրամի, մերժվել է 335 հայց՝ 2,6 մլրդ ՀՀ դրամի:

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

• Իրազեկման նյութերը հրապարակվել են ՊԵԿ պաշտոնական www.src.am կայքէջի «Նորություններ» և «Տեսադարան» բաժիններում, պաշտոնական սոցիալական հարթակներում՝ Facebook, Twitter, Telegram և Instagram, ինչպես նաև ՊԵԿ պաշտոնական Youtube-յան էջում: Ըստ անհրաժեշտության՝ տեղեկատվությունը

տարածվել է նաև 130-ից ավելի ԶԼՄ-ներով և սոցիալական ցանցերի մասնագիտական խմբերում (Facebook):

- Ընդհանուր առմամբ՝ 2025 թվականի ընթացքում իրականացվել է 283 հանրային իրազեկման միջոցառում:
- Հարկ վճարողների տարբեր խմբերի համար անցկացվել է 90 ուսումնական միջոցառում՝ 1 865 մասնակիցներով:
- Հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը ուսումնասիրել է հարկ վճարողների կողմից ներկայացված 2 281 բողոք, որից 33,3%-ը կամ 759 բողոք ամբողջությամբ կամ մասնակի բավարարվել է, իսկ 311-ը կարճվել է:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

- Արհեստական բանականության գործիքների ներդրման շրջանակներում Համաշխարհային բանկի հետ համատեղ խելացի ռիսկերի համակարգի ստեղծման նպատակով իրականացվել են մի շարք աշխատանքներ, ինչպիսիք են Համաշխարհային բանկի փորձագետի հետ համատեղ մշակվել է մաքսային ոլորտում արհեստական բանականության և մեքենայական ուսուցման գործիքակազմերի վրա հիմնված «խելացի» ռիսկերի կառավարման համակարգի տեխնիկական բնութագիրը:
- Ներդրվել է «Ծանուցումների և անձնակազմի կառավարման» նոր համակարգը, ինչի արդյունքում մաքսային մարմնի և ԱՏԳ մասնակիցների ու նրանց ներկայացուցիչների միջև շփումը իրականցվում է բացառապես էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով:
- Մեկնարկել են մաքսային գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը պարունակող էլեկտրոնային հարթակի (EXIM) ստեղծման աշխատանքները: Հարթակն ԱՏԳ մասնակիցներին հնարավորություն է տալու ծանոթանալ մաքսային գործառնություններ իրականացնելու համար անհրաժեշտ ամփոփ տեղեկատվությանը (ինչպես օրինակ ըստ ապրանքի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի մաքսատուրքերի դրույքաչափերին, արգելք սահմանափակումների ոլորտի կարգավորումներին և այլն):
- 2025 թվականի մայիսից գործարկվել է ապրանքների և տրանսպորտային միջոցների ինքնաշխատ բացթողնման գործիքակազմը: 2025 թվականի մայիս–դեկտեմբեր ժամանակահատվածի արդյունքներով ինքնաշխատ բացթողնման տեսակարար կշիռը կազմել է բոլոր բացթողնված ապրանքների հայտարարագրերի 6,75%-ը: Դեկտեմբերի արդյունքներով այդ ցուցանիշը կազմել է 8,15%, 2024 թվականի ընթացքում ինքնաշխատ բացթողնման տեսակարար կշիռը կազմել է ապրանքների հայտարարագրերի ընդամենը 0,06%-ը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- Մաքսային համագործակցության շրջանակներում կազմակերպվել է 12 միջազգային և տարածաշրջանային աշխատաժողով, իսկ հարկային համագործակցության մասով՝ 2 միջազգային և տարածաշրջանային աշխատաժողով:
- Կազմակերպվել և իրականացվել է շուրջ 42 հանդիպում՝ ՀՀ-ում հավատարմագրված դեսպանների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:
- ՏՀԶԿ «Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի» ըստ հարցման տեղեկությունների փոխանակման ստանդարտի ներդրման գործընթացի փորձագիտական գնահատականը 2025 թվականին հաստատվել է որպես մեծամասամբ համապատասխանում է» («Largely Compliant»): ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման ստանդարտի շրջանակներում, 2025 թվականին գործընկեր երկրների հետ իրականացվել է ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ առաջին փոխանակումը
- Տրանսֆերային գնագոյացման կարգավորումների ուղղությամբ կատարված աշխատանքների շրջանակներում կնքվել է առաջին նախնական գնագոյացման համաձայնագիրը հարկ վճարողի հետ, որի արդյունքում բարելավվել է հարկային մարմին-հարկ վճարող թափանցիկ համագործակցությունը:
- Հաստատվել են հարկային վարչարարության բարեփոխումների և մաքսային ծառայության առաջիկա տարիների զարգացման ռազմավարական ծրագրերը, որտեղ սահմանվել են ՊԵԿ առաքելությունը՝ ապահովել արդար և թափանցիկ հարկային և մաքսային միջավայր, խթանել կամավոր կարգապահությունը և ծառայել քաղաքացիներին ու բիզնեսին՝ հանուն Հայաստանի առաջանցիկ զարգացման և տեսկալանը՝ ՊԵԿ-ը դինամիկ զարգացող և առաջատար կառույց է, որը հայտնի է տեխնոլոգիական համարձակ նորարարությամբ և մարդակենտրոն մոտեցմամբ: